

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ օրերէն):

Յայտարարությունը ընդունւում է ամեն լեզուով:

Յայտարարությունները համար վճարում են
իրաւաւորները ըստ 2 կոպեկի:

ԲՈՎԱՆՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատակարար էլ չի օգնի.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միա-
բանութիւնը օյժ է. Տեղեկութիւններ Թիֆլիսայից.
Արտաքին լուրեր.—ՀՅՈՒԱՊԻՐՆԵՐ.—ԲՈՐՈՍԱ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կա-
պան ծովը վրա:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԱԹԻՒՆ ԷՆ ԶԻ ՕԳՆԻ

Իր «Երկրի աղը» յօդուածում «Արձագանք» շաբա-
թական թերթի 11-ի № 17-ի յօդուածագիրը,
առաւօտեան իշխան Կոնստանդին Բէկուլովին,
ձեռք է զարկում լուրերի գրող, սուրբ առաքելոց
և սուրբ հայր կանոնների և աւանդութիւնների
հիման վրա: Վճռել էլ չի մտածել կաթողիկոսական
տեղակալի հարցը, այսինքն տեղապահ իշխա-
նութեան աղբիւրի և սահմանի որոշման խնդիրը:

Որտեղից ծագեց այդ խնդիրը, որ երբեք դա-
րերի ընթացքում ծագած չէր մինչև ներկայ թի-
մայիս ամիսը:

Ս. Էլշիմովի կաթողիկոսական տեղակալ դե-
րապատիւ Երեմիա սրբազանը մայիս ամիսում ա-
ռաջարկած է եղել իշխանութեանը, սինօդի ան-
դամների թւի պակասը լրացնելու համար, երեք
անձինք երեք փոխանորդներով:

«Մշակ» լրագիրը պաշտպանեց Երեմիա սրբ-
ազանի այդ քայլը, «Արձագանք» շաբաթա-
թերթը հակառակորդ դուրս պրծաւ: Սրբ-
անք մտաւ, նախ՝ օրէնսդատօրէն ապացու-
ցանելու, թէ Երեմիա սրբազանը առանձին ի-
րաւունքներ չունի և տեղակալ չէ, երկրորդ՝ ըստ
աւանդութեան էլ նա տեղակալ չէ, որովհետև
կոնգրակ չունի Երկրորդ աստիճանի հանդիսացաւ
իշխան Կոնստանդին Բէկուլովին, և սա ա-
ռաւարդական ամպերից դէպի վայր խօսելով,
ասեց և ասում է, թէ տեղակալը տեղակալ չէ
առանձին իրաւունքներով, այլ նա մի պարզ նա-
խագահ է, առանձին նախագահի իրաւունքնե-
րով:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՍՊԵԱՆ ԾՈՎԻ ՎՐԱ

Յուլիսի 14-ին

Թէհրանից եւ մի մանրամասն նամակով խմբա-
գրութեանը հաղորդել էի Գրէյնֆիլդ անգլիացի
օրիորդի յափշտակութեան լուրը և այն ահագին,
նշանաւոր հետեանքը, որ այդ յափշտակութիւնը
առաջ բերեց և մի սովորական դէպքը քաղաքա-
կան մի մեծ խնդրի վերածեց: Տեղեկութիւնները
են քաղել էի Թէհրանի անգլիական և օսմանեան
գետնաւարներից և Սովետ-Բուլաղից ստացած
հաւատարմամբ նամակներից: Խնդրի կարե-
ւորութիւնը օտարակեր էր ինձ ձգբերտ և մանրա-
մասն տեղեկութիւնների հաղորդելը: Այդ նամակը
ես գրել էի յունիսի 25-ին և յուլիսի 2-ին ուղե-
ւորվելով Թէհրանից դէպի Դուշի, անկախում էի
չառով տղիւն տեսնել այդ յօդուածը: Որքան
եղաւ զարմանքս, երբ հասնելով Էնդէլի և փո-
թորիկ պատճառով ստիպված լինելով մի քանի
օր իբրեւ բանտարկեալ նստել չողենաւի մէջ,
կասպից ծովի վրա, և պատահմամբ ձեռքս ընկ-
նելով «Մշակի» վերջին համարները, կարդացի
խմբագրութեանը մի նկատողութիւնը, որով յան-
դիմանում էր թղթակիցներին, որ Գրէյնֆիլդ օ-
րիորդի գործի պէս մի կարևոր խնդրի մասին
նրանք լուռ են:

Արդարեւ, իրաւացի կը լինէր այդ յանդիմա-
նութիւնը, զէջ իմ վերաբերմամբ, եթէ ես լուռ
լինէի մի խնդրի մասին, որ մեծ կարևորութիւն

Բայց այդ բոլորն պէտք էր մի ուրիշ զգեստ
հագցնել ընդունելի անկ տալու համար, և ահա
իշխան Բէկուլովին թեկնաբար բնական, փշեղը հա-
ւաքած միջամուտ եղաւ սուրբ գրքերի, սուրբ ա-
ռաքելների և սուրբ հայրերի աշխարհը
այն տեղից ապացոյցներ դուրս բերելու, թէ
քրիստոնէական եկեղեցու հիմնադրը—Գրիստոս
ինքն իշխանութիւնը հօրից առաւ և այս աշխար-
հից մեկնելիս նա նոյն իշխանութիւնը տուեց ի-
րան յաջորդող առաքելներին՝ ասելով թէ՝ «որ-
պէս առաքելացի դիւ հայր և ես առաքելս դձեղ»,
գնացե՛ք ու քարոզեցե՛ք և ուսուցե՛ք և զօր կապի-
ցե՛ք յերկրի եղիցի կապեալ յերկնիս, և զոր ա-
ռաքելս յերկրի, եղիցի արձակեալ յերկնիս: Այդ-
պէս առաջ եկան երեք իշխանութիւններ, սրբա-
բազորները, ուսուցանիչները և կառավարե-
լուները: Ով որ այդ դռնով չը մտնէր ոչխարների
բաղը, նա գող է և աւագալ: Ուստի առաքելաւոր-
նք իրանց ստացած շնորհն և իշխանութիւնը
սկսեցին ձեռնադրութեամբ հաղորդել իրանց յա-
ջորդներին: Առաջին օրինակն այսպէս եղաւ:
Ուրացող Յուդան գնացել էր իր տեղը, այսինքն,
որ պարզ խօսեմը, տրաքվել էր. հիմա պէտք էր
մէկը, որ նրան փոխարինէր, 12 թիւը լրացնելու
համար: Հաւաքվեցան վերնատունը և Պետրոսը
ձառ ասեց, թէ արքայ եղբայրներ, Յուդայի տե-
ղը մի ուրիշին ընտրենք: Առաջարկեցին երկու
ընտրելի, մէկը անունը Յովսէփ՝ Բարսաբայ կոչ-
ված, միւսինը Մատթիա: Քուէարկեցին. վիճա-
կը Մատթիային ընկաւ, որ և այդպէս մտաւ
տասնմէկ առաքելների շարքը:

Այդպէս ահաւասիկ անցնում է յաջորդութիւնը՝
հետք կրելով վերոթեւեալ երեք իշխանութիւնները:

Այդ յաջորդութիւններից մինն է և հայաստա-
նայց եկեղեցու կաթողիկոսութիւնը: Կաթողիկո-
սը ընտրութեամբ և ձեռնադրութեամբ լինելով
առաքելական օրինաւոր յաջորդ, իր ձեռքում ու-
նի եկեղեցու կառավարութիւնը՝ վարչական, դա-
տաստանական և օրէնսդրական մասերով: Այդ է
ահա ճանապարհն ու կեանքը, ցոյց է տալիս մա-
տով իշխան Բէկուլովին, այդ է իշխանութեան
աղբիւրը և նրա սահմանը:

Շատ բարի, շատ բարի, իշխան. այժմ այն ա-
սեցե՛ք, թէ ինչպէս սարի գլխին դուք մեզ այդ

ունի թէ ընդհանրապէս քաղաքական տեսակէ-
տից և թէ մասնաւորապէս Թիֆլիսի հայերի դա-
տի համար, ուստի հարկաւոր համարելի հապճեպ
կերպով «Թուական» չողենաւի վրա, նորից հա-
ղորդել ձեզ այդ գործի մանրամասնութիւնը:

Ինչպէս յայտնի է, Արարիկական նախնայը
բաղկացած է մի քանի գաւառներից, որոնցից
մինն է Քիւրդստանը, որի գլխաւոր քաղաքն է
Սովետ-Բուլաղը: Արարիկականի քիւրդերը բաղկա-
ցած են մի քանի ցեղերից, որոնցից ոմանք
չիաւ, իսկ ոմանք սիննի աղանդին են պատկա-
նում: Սիննի քիւրդերը միշտ յարաբերութիւն
ունեն իրանց գրացի, Տաճկաստանի ցեղակիցնե-
րի հետ և միմեանց հետ ապրում ու գործում են
համերաշխ: Տաճկաստանի աւագակ, աւարաու-
քիւրդերը միշտ պաշտպանութիւն և ապաստա-
րան են գտնում Պարսկաստանի քիւրդերի—սինն-
իների մօտ: Վերջիններս թէև Դաշի հպատակ-
ներն են, բայց էօղլէկներ են, այսինքն շատ էլ
հնազանդ չեն և պարսիկ կառավարութիւնը միշտ
չէ կարողանում զսպել նրանց: Նրանք կառա-
ւարվում են իրանց ցեղագետների ձեռքով, ո-
րոնք անսահման կերպով լիւրսում են ժողովրդի
վրա: Շատ անգամ նրանք զլուխ են բարձրաց-
նում կառավարութեան դէմ և այդ դէպքում ի-
րանց ցեղակիցներին, ինչպէս, օրինակ 1881
թուին, Դաշի Իրազուլի արշաւանք, որի նպա-
տակն էր օգնել ցեղագետ Համալայ աղա-
յին, որին պարսիկ կառավարութիւնը սպանել
էր առել իր գործած ոճիրների համար: Պարս-
կական Քիւրդստանը մի և նոյն ժամանակ

քարոզութիւնն էր անում տեղակալութեան խնդ-
րի առիթով ի հարկէ, որ առանց այլեւայլու-
թեան եղրակացնէր, թէ տեղակալը ձեռնադրված
յաջորդ չէ մայր աթոռի եպիսկոպոսապետին, ա-
ռաջին եպիսկոպոսին, ուստի և նա վարել կա-
րող չէ ձեռք թեւած իշխանութիւնները, և հետեա-
բար լուծված է տեղակալի իրաւունքների մասին
յարուցված հարցը:

Ուրեմն թող կանգնի մնայ մեր վարչական
կառքը:

Ներքեցէ իշխան, մեր համարձակութեանը,
դուք որ ա. գիրքը բանալ ու կարդալ դիտե՛ք, եր-
բէք ձեռ օրում բացել ու կարդացել էք մեր աղ-
ղի ու եկեղեցու պատմութեան գրքերը:

Մենք ունեցել ենք տեղակալներ, որովհետև
մեռել են մեր կաթողիկոսները առանց առաջուց
յաջորդներ թողնելու, բացի մի քանի բացառու-
թիւնից, ուստի և մեր եկեղեցին տեղակալներ
ունենալու հարկի մէջ է գտնվել միշտ, որպէս զի
անիշխանութիւն և քաոս չը տիրէ մինչև նոր
կաթողիկոսի ընտրվելը:

Մենք ունեցել ենք տեղակալներ, սկսեալ ամե-
նամեծից, որ է լուսաւորիչ Մեսրոպը, ամենա-
սրբից, որ է մեծ նահատակ Յովսէփ Վայոց-ձո-
րեցի, մեծ եկեղեցապետից՝ որ է Վերմանէս քե-
թով վարդապետ, Յովհաննէս Մանազկերտցի,
Խաչիկ՝ որ և ապա կաթողիկոս և այլն և այլն և
այլն: Դրանք վարել և կառավարել են եկեղեցին
վերոյիշեալ երեք իշխանութեամբն էլ: Ուրեմն
նրանք և մեր պապերը հերետիկոսներ են եղել:

Հերետիկոս էր և երկվայ տեղակալ Մակար
արքեպիսկոպոսը, առանց որ այն ժամանակվայ
սինօդը մտնէր անդամ անցկացնել, թէ սրբազան
Մակար տեղակալը կաթողիկոսի իրաւունքը յա-
փշտակում է: Նորին սրբազանութիւնը Սինօդի ան-
դամ առաջարկեց Սարգիս վարդապետին, որ այն
ժամանակ չընդունվեցաւ մի ներքին պատճառով.
դարձեալ սինօդի անդամ առաջարկվեց Մամբրէ
վարդապետը և ընդունվեց. իսկ սինօդն էլ ան-
խնդիր հօդով և մարմնով ընդունեց իր գիրքը այդ
նոր եղբայրակցին:

Կամ այն է, որ այն ժամանակը սինօդը և դուք
էլ միւսների հետ, Մատթիայի ընտրութեան ու
սրբաբազորվելու գլուխը Գործը-Առաքելոցի մէջ

և խիստ բերրի ու վաճառաչս երկիր է.
երկրագործութիւնը ժողովրդի գլխաւոր պարապ-
մունքն է: Վաճառականութիւնը գտնվում է գըլ-
խաւորապէս հայերի և պարսիկների ձեռքում:
Այդ գաւառի կառավարելը նստում է Սո-
վետ-Բուլաղում և նշանակվում է իր պաշտօնի
մէջ Արարիկականի կուսակալ Էմիր-Նիզամի կող-
մից: Պէտք է ասել, որ վերջինիս կուսակալութեան
ժամանակ քիւրդերը խիստ հանգարտ են կենում և
սաստիկ վախենում են Էմիր-Նիզամից, որ նրանց
հետ հանաք անել չէ սիրում: Հայերից շատերը
կապալով վեր են առնում քիւրդ աղանդից (կա-
լուածատէրերից) գիւղերը և վաճառահանում են
բերքը՝ ցորեն, ծխախոտ, բրինձ, բամբակ և այլն:
Ոմանք են իրանք կալուածատէրեր են, այսինքն
քիւրդ գիւղերի տէր են: Այդպիսի մի կալուածա-
տէր է և անգլիացի Այդիկ Գրէյնֆիլդ անունով
մի վաճառական, որը տոկոսբերով դրամ փոխ
տալով մի քիւրդ աղային—Ահմէդ-բէկին, տիրացել
է նրա 3 գիւղերին: Այդէկ Գրէյնֆիլդը ամուսնա-
ցած է թաւրիկով մի հայ կնոջ հետ, որից ունի
մի քանի գաւառներ—երեք աղայ և 4 աղջիկ:
Տղաներից անդամները—Գրիմանիայում սովորել
էր թշվառութիւն և վերադարձել թաւրիկը: Աղջիկնե-
րից երեքը ամուսնացած են թաւրիկում. վերջի-
նը, 16 տարեկան կոյս Էմիլիան դուստր մօտ է:
Գիւղերի կառավարութիւնը անցել է կնոջը: Թէ
տիկին Այդիկը և թէ իր աղջիկ Էմիլիան լուսա-
ւորչադատ են և համարում են իրանց հայ,
արդարեւ ըստ ամենայնի թաւրիկի հայերի
կեանքով: Տիկինն իր ընտանիքով տարվայ մեծ

չէիք կարդացել պարտ ու պատշաճ ուշադրու-
թեամբ, կամ էլ այն է, որ Մատթիայի օրինակը
բոլորովին չէ պատշաճվում տեղակալութեան խնդ-
րին, որովհետև եթէ պատշաճվէր, նորից կրկնում
ենք, մեր տեղակալները Մեսրոպից մինչև ինքն
Իսկ Մակարը դուրից մտնողներ չը պիտի համար-
վէին ձեռ աչքում, այլ երգիքից կամ պատի ծա-
կերից:

Արդարեւ, դուք այդպէս էք համարում նրանց:
Հազիւ թէ. որովհետև այդ դէպքում դուք շատ
հեռու պիտի քայլէիք պ. Եւանգելիանից, որի
ուղիղ դաւանութիւնն այն է, թէ սրբազան Մա-
կարը տեղակալ էր և իրաւամբ վայելում էր իրա-
ւունքներ, թէև նա ընտրութեամբ սրբաբազոր-
ված չէր—ըստ ձեռ վարդապետութեան:

Ոչ, ամենիս այնպէս է թվում, որ նոյն իսկ
ձեռ աչքում Մակար արքեպիսկոպոսի տեղակալու-
թիւնը սուրբ էր: Ձեր վէճը ընդհանրապէս տե-
ղակալութեան և տեղակալների դէմ չէ, որովհետև
այդպիսի դէպքում դուք անպակասաբայ, ցերեկվայ
լուսով, համայն հայութեան առջև, մեր բոլոր
տեղակալներին ձեռ վարդապետական ուղիղ տե-
սութիւնից չեղված և ձեռնաթիկոսական մոլորու-
թեան մէջ զլորված պիտի հռչակէիք, որ նրանք,
առանց մատթիաբար ընտրված և ձեռնադրու-
թեամբ շնորհ ստացած լինելու, վարել են հայոց
եկեղեցին, օժված կաթողիկոսի բացակայութեան
դէպքում, վերջիշեալ երեք իշխանութեամբ: Ձեր
վէճը ներկայ գերապատիւ Երեմիա տեղակալի
դէմ է:

Ինչպէս:

Այն պատճառով—ներքեցէ որ վարդապետական
ամպերն ու մթնոլորտները մի կողմ ծաղկեց, որոնք,
այս խնդրում, արուեստով են առաջ բերված, և ա-
ռանց պատշապատ ընկնելու, ուղղակի դանախի ուկո-
րին տանք—ուրեմն այն պատճառով, որ նրան ձեռ
ու ձեռ դաշնակցութեան բարեկամը չէք համարում.
և մանաւանդ այն պատճառով, որ նրան—լուսն ա-
ղետից—ձեռ հակառակորդների բարեկամն էք
համարում և մտածում էք թէ նա իր իշխանութեամբ
կարող է ի վնաս ձեռ նպատակների և ի նպատ-
ած ձեռ հակառակորդների ուղղութեան տանել առա-
ջիկայ գործերը:

Արիք, անկեղծութեամբ և ամենայն պարզու-

մասը անց է կացնում իր գիւղերում: Նրան դրա-
ցի է Ահմէդ-բէկը, որի գեղեցիկ, հովիւ երի-
տասարդ որդին վաղուց աչք է տնկում գեղանի
Էմիլիայի վրա: Կըրտո, վայրենաբարոյ քիւրդը,
որի համար մի հայ կամ անգլիացի աղջիկ ոչ մի
նշանակութիւն ունենալ չէ կարող, սովորած լի-
նելով միշտ առեւանգել կոյսերին, քրդական սո-
վորութեան համաձայն, առանց երկար մտածելու,
աղջկայ քիւրդ աղանդու միջոցով փախցնում է
նրան: Փախուտը կատարվում է հետեւեալ կեր-
պով: Երեկոյեան դէմ աղաւթիմը, օգուտ քաղելով
մօր բացակայութիւնից, յորդորում է օրիորդին
գնալ միասին ման դալ գիւղի արտերում: Երեւոյն
օրիորդը համաձայնվում է և աղանդի հետ գնում
է դէպի գետակը: Հազիւ մտնում են մօտակայ
մի հովտի մէջ, որ քիւրդ ձիւղերն են, յափշտա-
կելով օրիորդին և աղաւթնուն, անհետանում են:
Մի երկու ժամից յետոյ մայրը վերադառնում է
տուն,—գիւղը և չը գտնելով աղջկան ու աղաւթ-
նուն, հարցնում է ուր են գնացել: Ոչ ոք պա-
տասխանել չէ կարողանում. վերջապէս գի-
շերը վրա հասնելով, մայրը հասկանում է, որ
աղջկան փախցրել են. իսկոյն մի քանի ձիա-
ւորներ են ուղարկում փախստականների ետեւից,
բայց առաւօտեան վերադառնում են ձեռնունայն:
Մայրն անմիջապէս գնում է Սովետ-Բուլաղ,
յայտնում է տեղական կառավարչին, հեռագրում է
թաւրիկ անգլիական հիւպատոսին և Էմիր-Նիզա-
մին: Վերջինս, որ յայտնի է իր արդարադատու-
թեամբ, անմիջապէս հրամանագրում է Սովետ-
Բուլաղի կառավարչին գտնել աղջկան և առեւան-
գողներին ուղարկել թաւրիկ: Կառավարիչը յայտ-

Թեամբ, վեճը փոխադրենք իր իսկական ասպարեզի վրա: Քննենք թե որտեղ է սուրբ և մաքուր ձգտումը և հաշիւ ու համար պահանջներ երեւոյտեղակայից, եթէ նա լայնը թողած՝ խաւարն է գրկում:

Թէ չէ, Մատթիւան դործ չունի այստեղ և նա ձեռք չի օգնի ընդդէմ՝ Երեմիայ տեղակայի, որ, խօսքը տեղը գալով՝ ասենք, լինելով հայոց ծէսի եպիսկոպոս, հայ եկեղեցուց վկայված է արժանաւոր և հայ եկեղեցու օժեպ գիտապետի օժեպ աշուկ հայ եկեղեցու վրա ձեռնադրված է դէտ, իսկ և այժմ բարձր իշխանութեամբ հայոց կաթողիկոսի անուն է պահուում, մինչև զայ ինքն կաթողիկոսը: Եւ նրա պատուանունը, ըստ մերում, է—գերապատիւ և չնորհաշուր բարձր տեղակալ Այրարատեան Մայր Աթոռոյ սուրբ Էջմիածնի:

Ի նկատ առէք այս, դուք, որ եկեղեցական իրաւագիտութեան Ա և Գ կու սուած էք ներկայանում և եկեղեցագէտ հանդիսանում:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱԹՈՒՄԻՅ մեզ գրում են, յուլիսի 16-ից հետեւալը: «Չը նայելով ուրիշ տեղերի չգրելին, Բաթումում յունիսկոյ սկսած ամսամած և անձրեային եղանակներ է անում. ջերմաչափը շատ քիչ անգամ բարձրանում է 23 աստիճանից: Տեղացիները մի մասը ամառը գնում են եօթ վերստ հեռու գտնվող Ախալքէն անունով մի գիւղ, որ պէս ամառանոց: Այդ տեղը ծովի առջև մի բարձրաւանդակի վրա ընկած՝ շատ հիանալի դիրք, մաքուր օդ և լաւ ջուր ունի, միայն ճանապարհը վատ է: Բացի սրանից անյարմար են բնակարանները և դժուար է ձարել կենսական թաղմ պիտոյները: Եթէ այդ ամառանոցի տեղը բարեկարգվէր, շատերը ուրիշ տեղերից էլ կը գային Ախալքէնի գեղեցիկ օդը վայելելու:»

ՊԵՏԱԿՈՐՍԿԻՅ մեզ գրում են. «Մեր բանաստեղծ Բաթայէ Գառնանեան, որը եկած էր Պետրոգրադի հանգրային ջրերը բժշկվելու նպատակով՝ բժիշկներին խորհրդով այստեղ բուրդովին չը մնաց, այլ գնաց Կիսլովոդսկ, ուր գոցէ մինչև օգոստոսի վերջը մնաց:»

Մեզ հասած լուրերին նայելով այս տարի Տէրքեան չըբանում հացահատիկները հունձը ընդհանրապէս լաւ է լինելու: Խոտի հունձը, որը վաղուց վերջացել է արդէն, աշուղ է համարվում: Ուստաւանում տիրող բարձր գինը հացի վրա այդտեղ դեռ ներդրութիւն չունեցան, բայց թղթակցի կարծիքով, հաւանական է որ վերջ ի վերջը ընդհանուր թանկութիւնը կազդի և կուկանեան հացի գները վրա:

Նում է, որ աղջկան տարել են Տաճկաստան, սահմանից անցնել և փախցնողները տաճկահայատակ քրիւղեր են, բայց Էմիր-Նիզամը, որ տեղեկութիւն է առնում թէ փախցնողը պարսկահայատակ Ասմէ-բէկին որդին է, հրամայում է, որ կամ բոլոր պարսկահայատակ քրիւղ աղաներին ուղարկեն Թավրիզ կամ աղջկան գտնեն: Լաւ իմանալով Էմիր-Նիզամի անտոյք բնաւորութիւնը, քրիւղ աղաները խորհրդակցում են և որովհետեւ արդէն աղջկայ պատիւը բռնաբարած է լինում քրիւղ երիտասարդը, ուսով մահմետականացրած նրան և քեւարին կտրած, ուսով յայտնում են, որ պատրաստ են շուտով աղջկան գտնել: Չէ անցնում մի օր և ահա գալիս յայտնում են, որ աղջիկին ինքն իր յօժար կամքով փախել է մի տաճկահայատակ քրիւղ երիտասարդի հետ, ինքնայօժար ընդունել է մահմետական կրօնը և ամուսնացել քրիւղ երիտասարդի հետ և այժմ գտնվում է այս ինչ գիւղում: Այդ բաւական չէ, տաճկահայատակ սիւննի քրիւղ երիտասարդը առնալով աղջկան, ահազին բաղձութեամբ գալիս է Սովետ-Բուլաղ և մտնում օսմանեան հիւպատոսարանը ու նստելով օսմանեան դրօշակի տակ, աղաղակում, որ աղջիկին իր օրինաւոր կինն է, մահմետական է և պարսիկ կառավարութիւնը, իբրեւ չիտ, կամենում է բռնութիւն դործել իր դէմ, ուստի նա դիմում է իսլամների խալիֆային, անյաղթ սուլթանի հովանաւորութեան և պաշտպանութիւն է որոնում կիսաուստի դրօշակի տակ: Կայծակի արագութեամբ այս լուրը տարածվում է սիւննի քրիւղերի մէջ, և ահա սիւննի քրիւղ ձեռնադրողի ահազին բաղձութիւն սկսում է ժողովիլ Սովետ-Բուլաղի բնում:

ԿԱԳՂՈՒՄՆԻՅ մեզ գրում են, որ այնտեղ այս տարի ընդհանրապէս այգիները առատ բերք ունեն, միայն այգիների մի մասը կարկուտ փչացրեց, բայց և այնպէս առատութիւնը մեծ է և յոյս կայ, որ այս տարի ժողովուրդը այն նեղութիւնները չի քաշի, ինչ որ անցեալ տարի քաշեց:

Առաջիկայ 1891/92 թ. սեզոնի համար ընտրված թատրոնական մասնաժողովը խնդրում է մեզ տպել հետեւալը. «Թատրոնական մասնաժողովը խնդրում է այն անձանց, որոնք պատրաստ ունեն ինքնուրոյն կամ թարգմանական նոր պիեսներ, բարեսահման ներկայացնել շուտով մասնաժողովին: Առաջարկված պիեսները կը յանձնվեն մասնաժողովին կողմից հրաւիրված մի առանձին յանձնախմբի ընտրութեամբ: Ներկայացնելու համար յարմար դատված պիեսայի հեղինակը կամ թարգմանիչը վարձ կը ստանայ առանձին պայմանով: Պիեսները պէտք է ներկայացնել մաքուր արտագրված, իսկ թարգմանական պիեսները՝ ինչպէս ներկայացնել և նրանց ինքնուրոյն օրինակները: Գիմը յանձնաժողովին փոխանդում պ. Զիրվանդադէին. Ррѣбѣдовская ул., домъ Мун-тоева № 7.»

Մեզ խնդրում են յայտնել, որ կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձու թիւ 10 թիւով Զ. Բաթումի Թիւ 10 թիւով գտնվող Տէր-Յարգիւսի կողմանի պանդոնը այս տարվայ յուլիս ամսից վերափոխվում է հինգ դրամ արժանի անձնաւորութեանը: Գիմնադրային և բնական ուսումնարանի գիմնադրային և բնական ուսումնարանի ծրագրով: Ուրիշ անհրաժեշտ և հաստատված պրոգրամայից պահանջվող առարկաները թուրք կառավարիչի հայերի համար՝ կրօն, հայոց եկեղեցական պատմութիւն, մեկնութիւն հայոց պատարագի և հայոց լեզու:

«Տարազ» շաբաթաթերթում կարդում ենք հետեւալը. «Մենքաները Թիֆլիսի Մուշտայիդ այգում մի տիւրը դէպք պատահեց. այդ օրը, ահազին բաղձութեան առջև մի կին արեւակալով ծեծում էր մի չընդ կերպով հագնված, առատազաման քահանային: Եթե պատահում մինչև հիմա համարում էին այն, որ վերոյիշեալ քահանան գրկել և համբուրել է կնոջ, որի համար իբր թէ և ստացել է այդ սարսափելի, հոգեորական անվայել պատիժը. բայց այժմ «Тифл. Лист» թերթը հաղորդում է, որ առասաց թեմական առաջնորդութեան հարցին՝ պօլիցիան պատասխանել է թէ քահանայի ծեծվելու պատճառը եղել է մի ինչ որ դրամական հաշիւ այդ կնոջ հետ:»

Երդման հարցի մասին Տոկարսկուն տուած մեր պատասխանից յետոյ, նոյն հարցի մասին Մշա-

չն անգամ Տաճկաստանից, չըբաղատում է օսմանեան հիւպատոսարանը և օսմանեան դեր-հիւպատոս Թովմա Էֆէնդուց պահանջում պաշտպանութիւն: Այդ Թովմա Էֆէնդուն դիմում է և պարսիկ կառավարիչը և պահանջում, որ աղջիկը և փախցնողները յանձնվեն իրան Թավրիզ ուղարկելու համար: Թովմա Էֆէնդին հեռագրում է Թավրիզի օսմանեան ընդհանուր հիւպատոս Բէհնէր Էֆէնդուն և հրահանգ խնդրում. վերջինս հրամայում է յանձնել Երբ դեր—հիւպատոսը, որ քրիստոնէայ է (ստորի) կամենում է կատարել այդ հրահանգ, քրիւղ խաժութում ամբողջ գոտում է. չանխնայ քրիստոնէայ, կամենում են քո հաւատարմութեանը օգնել, փոխանակ սուլթանին հաւատարմութեամբ ծառայելու. ահա շան պէս կը ստոկեցնենք քեզ», և թափվում է նրա ընակաւանի վրա, որոնք իր նրան, որ պատառ պատառ անի, բայց Թովմա Էֆէնդին ճողպում է և իրան ձգում կառավարչի տունը և հազիւ աղաւթվում է անխուսափելի մահից:

Խոսժանը, կատարել, միջոցառող ամբողջ, գրոհ-տալով կառավարչի տունը աղաղակում է, չտուր մեզ Թովմայի, այդ քեւափրիկ գիւղից: Բայց կառավարիչը զօրքի ուժով հալածում է ամբողջ և բոլոր եղելութիւնը հեռագրում Էմիր-Նիզամին: Մինչ այդ, անյիլացի օրիորդի եռանդուն մայրը վաղում է Թավրիզ, դիմում է հիւպատոսին, հեռագրում է Թէհրանի անգլիական դեսպանատունը, Լոնդոն լորդ Սոլսբերի և օգնութիւն է հայցում: Լոնդոնից իսկոյն հեռագրում են անգլիական դեսպանին աղաղակ միջոցներ ձեռք առնել և պահանջել Դանի կառավարութիւնից աղջկայ աղաւթութիւնը: Դանի կառավարութիւնը

կիւ յայտնած հայեացքը պաշտպանող յօդուածներ երեւցան «Тифл. Лист» թերթում 8-Յատրագրութեամբ (№ 164), «Кавказ» թերթում, Գրիգոր Արծրունու ստորագրութեամբ (№ 191) և վերջապէս «Տարազ» շաբաթաթերթում (№ 27):

Տեղական լրագիրները հաղորդում են, որ շուտով լայն կը տեսնի Արիստոմ Գովհանիսեանցի ռուսերէն-հայերէն բառարանի երկրորդ հատորը: Գանկալի է որ այդ երկրորդ հատորը շուտով երևար, որովհետեւ շատ դժուար է գործ ածել առաջին հատորը առանց երկրորդի: Արդէն երկու տարի կայ որ առաջին հատորը հրատարակվեց:

Ստացանք պ. Գանաշվիլիից «X դարու գանձ» անունով վրացերէն գրքիկը, որը պարունակում է վրացիների մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան գրադարանում գտնվող X դարին պատկանող մի ձայնագրական ձեռագրի նկարագրութիւնը:

Ստացանք Ղուբայի հայոց եկեղեցական ծխական երկսեռ դպրոցների հոգաբարձութեան 1884/5—1888/9 ուսումնական տարիների տեղեկագիրը: Լաւ կը լինի, որ մեր հետաւորանները հոգաբարձութիւններն էլ հետեւին Ղուբայի դպրոցների հոգաբարձութեան օրինակին: Այդպիսով կը կարգվէր նիւթերի մի ժողովածու եկեղեցական դպրոցների կազմակերպութեան ուսումնական դպրոցների կազմակերպութեան համար:

«Кавказ» թերթում կարդում ենք ներքին գործերի միւնիստրի յուլիսի 3-ից նահանգապետներին ուղարկած հետեւալ շրջաբերականը: «Ուստաց Կայսերական ընդհանուր հիւպատոսարանը Կ. Պոլսում տեղեկացնում է, որ խօշորայով հիւպատոսարանի դէպքեր եղել են Ալեքսո քաղաքում և Ալեքսոյի ու Բիւրուլի մէջ գտնված մի քանի տեղերում: Այդ պատճառով կայսրութեան մէջ խօշորայի անցնելուն առաջին առնելու համար, անհրաժեշտ եմ համարում, մինչև նոր կարգադրութիւն անելը, արգելել արտասահմանեան անցադիրների տալը այն ուղիւստներին, որոնք գնում են Արիական Թիւրքիա սուրբ տեղերը երկրպագելու համար:»

Նոյն լրագրին հաղորդում են, որ տեղական վարչութիւնը միջնորդել է ուր հարկն է Գորու գաւառում կալանաւորված առաղակային խումբը ղինւորական դատարանին ներկայելու:

պատասխանում է, որ պատրաստ է ամեն կերպ օգնել, պատժել յանցաւորներին և աղաւթել օրիորդին, բայց քանի որ յանցաւորները ապաստարան են գտել օսմանեան դրօշակի տակ, քանի որ առանցքողները տաճկահայատակներ են և քանի որ ոչ թէ պարսկահայատակ քրիւղերը, այլ Տաճկաստանից եկած սիւննի քրիւղերը և չէլները չըբաղատել և պահում են աղջկան, ուստի օսմանեան կառավարութիւնը պարտաւոր է զսպել իր հպատակներին: Պէտք է ասել, որ Պարսկաստանի մէջ, երբ մի օտարահպատակ յանցաւոր է, նրան ձերբակալել, դատել և պատժել կարող է միայն իր տէրութեան ներկայացուցիչը — հիւպատոսը կամ դեսպանը և եթէ մի փախստական կամ մի անձ փախելով մտնի մի տէրութեան հիւպատոսարան և ապաստանի նրա դրօշակի տակ, այդտեղից նրան հանելու ուժով—կը նշանակէ անպատեւել այդ դրօշակը: Այդ պատճառով Սովետ-Բուլաղի պարսիկ կառավարիչը անկարող էր ուժով մտնել հիւպատոսարան և քաշել աղջկան ու աղաւթել:

Մինչ այդ բանակցութիւններ լինելը, Սովետ-Բուլաղում հեռագրեալ հաւաքում են սիւննի քրիւղ աղաները և չէլները, մօլլաները և զաղիները, մանաւանդ Տաճկաստանի սահմանից, հրատարակվում է մի տեսակ սրբազան պատերազմ. «սուրբ կրօնը վտանգի տակ է»: Եւ չէլները յայտարարում են, որ անգլիական իրանց ներկայութեամբ խոտորվանել է, որ ինքն ընդունել է ճշմարիտ, սուրբ կրօնը և հրաժարվում է իր ծնողներից և աղբից: Այս խոտորվանութիւնը եւ զի էր, ի հարկէ, սպառնալիքի և ճնշման ներքոյ, որիորդին ամեն բոլոր սպառնում էին սպանել,

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՍՈՒՐԱՆՈՒԹԻՆԸ ՈՅԺ Է

Արտասահմանեան մի հայոց լրագիր հետեւալ դատողութիւններ է անում միաբանութեան անհրաժեշտութեան մասին քաղաքական կենտրոնէրի միտքը հաստատելու համար յիշեցնում է կարճ կերպով թէ խալիֆայի և թէ Գերմանիայի վերջին տարիների պատմութիւնը: Ահա ինչ է ասում լրագիրը:

«Ով չը գիտէ թէ այսօրվայ խալիֆան 30 տարի առաջ հինգ թէ վեց զանազան օտար բռնակաշների տակ շարժարկում էր և բացի սրանից զանազան կուսակցութիւններ իրանց ոյժերը ապառում էին ներքին կոռւսերով: Այդ երկպառակութեան պատճառով էր, որ խալիֆայի աշխատութեան գործը միշտ և անդադար յետաձգվում էր: Կալուր և Գարեբաղի հատկացան թէ այդ կուսակցութիւններից միւս պէտք է դորացնել խալիֆայի միտքիւնը ձեռք բերելու համար, ուստի այժմ տուին վիկտոր Էմմանուէլի տանը և նրան յաղթական օժանկելով խալիֆայի միւս երկիրները ինքնակամ և ժողովրդական քուէարկութեամբ միացան Սովորայի իշխանութեան հետ:»

Գերմանիայի միտքիւնը դեռ քանի տարիվայ գործ է: Բայց միթէ գերմանացիք նոր են հասկացել «միտքիւնը դորոշիւն է» ճշմարտութիւնը: Ոչ, Գերմանիան սրանից մի քանի հարիւր տարի առաջ արդէն ունէր իր փիլիսոփաներ, իր գրողներ, իր բանաստեղծներ, իր ժողովուրդներ, իր գիտնականներ, իր քաղաքագէտներ, որոնք միտքիւն էին յորդորում իրանց հայրենակիցներին: Սակայն չը նայելով որ Գերմանիայի բաժան բաժան իշխանութիւնները և քաղաքները Աստուրիյի, Շվեյցարիյի, Յրանիայի բանակներից ջարդվում, լլկվում էին, բայց իրանց բոլոր իմաստասիրական գիւղանքով չը կարողացան երկար ժամանակ աջողցնել իրանց միտքեան գործը: Եւ եթէ Պրուսիայի հաստիւղ ղինւորները չը լինէին, եթէ Սուրբիլի և Բիսմարկի հանձարը չը կտրէին Աստուրիյի ոյժը և չը խոտորակէին Յրանիային,— ոչ մի գերմանացի փորձիկ իշխան չէր երթալ Բերլին՝ միացած Գերմանիայի արձանի տակ միտքեան երգը երգելու:

«Այս է աշխարհի օրէնքը. ցոյց տուեցէր ոյժ,—այն ժամանակ ձեռք հետ կը միանան, իսկ եթէ տկար կը լինէր,— ոչ ոք ձեռք չի մօտենայ, ոչ ոք ձեռք հետ չի միանայ:»

ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Հետեւալ տեղեկութիւնները կարդում ենք արտասահմանեան հայոց լրագիրներում:

չարչարել, եթէ յայտնէ, որ ինքն յօժար կամ ըրով չէ փախել: Պէտք է ասել, որ քրիւղերը անգրում կարծում էին թէ աղջիկը հայ է, ուստի երբ անցնել, որ անգլիական է, նրանք չը կամեցան հաւատալ, ասելով, որ այդ պարսկական անշուշտ, նրանք ենթադրել չէին կարող, որ հայ աղջիկ արգան հօր պաշտպանութիւն կարող է ունենալ: Եւ ահա հաղաբար բաղձութիւն չըբաղատելով Սովետ-Բուլաղի օսմանեան հիւպատոսարանը, ղինւով բռնաբարված աղջկան դրօշակի տակ, ղինված զիւրից մինչև ոտքը Մարտինի հրացաններով, ատրճանակներով և դաշոյններով, սարսափ և ահ է աղաւթում ամբողջ քաղաքը վրա, «մահ գիւղաւորներին, մահ Թովմային» կոչելով, այնպէս որ քաղաքի քրիստոնէայ ժողովուրդը, երկիւղ կրելով ընդհանուր կոտորածից, սկսում է փախչել: Պարսիկ սակաւաթիւ զօրքը և կառավարիչը չեն յանդգնում ոչինչ ձեռնարկել այդ խուժանի դէմ: Թավրիզի օսմանեան հիւպատոս և Թէհրանի օսմանեան լիազօր դեսպան խալիֆ Բէկի բոլոր հեռագիրները, հրամանները, սպառնալիքները մնում են չձայն բարբառող յանապատիւ: Եւ չէլները գոռում են. «դեսպանը ոչ մի իրաւունք չունի այս գործին խառնվել, սա կրօնական գործ է, կը բողոքենք սուլթանին, խալիֆային մի մեծ պաշտպանիւն Այդ հրամանը նրանից չէ:»

Արդէն աղջկայ առանաւորումից անցել էր 2 ամիս և դեռ աղաւթութեան ոչ մի յոյս, ոչ մի նշույլ: Պարսիկ կառավարութիւնը յայտարարում էր չարունակ, որ ինքն պատրաստ է զսպել այդ խաժամոժ ամբողջը, աղաւթել աղջկան, միայն եթէ օսմանեան կառավարութիւնը թողլ տայ ի:

— — երկրորդ —	230 > 25	Մասկովայի քաղաք. օրվադպրանք. 102 > —
Պետական. երկրորդային ընտան. 104 > 25		Օրվադպր. — — — 102 > 75
51/2% ընտան. — — — — —		Ռիգայի — — — — —
40% ներքին փոխառություն. 97 > 50		Գրառ. թղթ. թիֆլիսի կալ. բանկի. — — — — —
50% գրառ. թղթ. աղ. կալ. բանկի 101 > 25		— — — — —
51/2% վիսյակ. գիւղ. հող. բանկի. 102 > —		Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրությունը
41/2% գրառական թղթեր կապում. — — — — —		խաղաղ է:
փոխ. կրեդիտ. ընկեր. մեծալ. 145 > —		
— — — — — թղթադ. 103 > —		
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. — — — — —		
ընկերություն օրվադպրանք. . 102 > 37		Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՀՈԳԵՏՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ կարգադրությունը ամսի 28-ին, կիրակի օրը, սուրբ պատարագից յետոյ ժամը 12-ին պիտի կատարվի քաղաքիս Կաթողիկէ սուրբ Աստուածածին (սուրբ Գեորգ) եկեղեցու նոր երեքփեղանի և հաշուառանց ընտրությունը, ուստի յիշեալ եկեղեցու մեծապատիւ ծխականները հրաւիրվում են նշանակեալ օրը նոյն եկեղեցին մասնակցելու ընտրութեանը:

Թիֆլիսի եկեղեցիների բարեկարգութեան վերաբերեալ Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանց:

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՏՈՐ ԴՊՐՈՑՈՒՄ նորեկ աշակերտների ընդունությունը սկսվելու է օգոստոսի 20-ից: Իւրաքանչիւր խնդրատու աշակերտ պէտք է անպատճառ ներկայացնէ իր ծննդան, ծաղիկ և ուսման վկայականները: Վնասվածները և վերաքննությունները սկսվելու են օգոստոսի 26-ից հետեւեալ կարգով:

- Բշ. 26-ին կրօն, սուրբ պատմություն, եկեղ. սովոր և եկեղ. երգեցողություն:
 - Դշ. 27-ին հայոց լեզու և հայոց պատմություն:
 - Դշ. 28-ին ուսաց լեզու և ուսաց պատմություն:
 - Եշ. 29-ին ֆրանսիական լեզու և ընդհանուր աշխարհագրություն:
 - Ուրբ. 30-ին լատարանություն, հանրահաշիւ, երկրաչափություն և տիեզերագր.:
 - Շբթ. 31-ին կենդանաբանություն, բուսաբանություն, բնախօսություն և նկարչու-թիւն:
- Բացի նշանակեալ օրերից ընտրություններ լինելու չեն:
- (Յուլիսի 25, օգ. 7 և 15) 1—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶՐԱՆՑՔԻ ԳՐԱՍԵՆՆԱԿԸ յայտնում է ի դիմումին ջրանցքի այն արձաններին, որոնք դեռ չեն վճարել ջուր բանեցնելու կամ ջրանցքից օգտվելու համար նշանակված փողը, որ օգոստոսի 1-ից կը դադարեցվի նրանց ջուր մատակարարել:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ յայտնում է արձանով, որ ընկերությունն 1891 թվի անդամները կարող են ստանալ կենտրոնական գրախոսականությունը ընկերության հետեւեալ հրատարակությունները:

- 1) Տօլստոյ—Աստուած գիտէ արդարեւ ու մեղաւորը:
- 2) Վայսներ—Հաւատարիմ Սպիտակ:
- 3) Պետալոցի—Լինհարդ և Գերարդ:
- 4) Նալ և Կամպանատի:
- 5) Ռոզենշտայն—Նախ փորձաւորը:
- 6) Սպիլերի՝ Ուսեմից Յովսէփ:



Մ. Գ. ՑԵՑՏԼԻՆԻ

ՃԱՄԱՑՈՑՆԵՐԻ ՄԱԳԱՋԻՆԻ

ՕՊՏԻԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻԲԸ

Պաշտոնի այդու դիմաց, անկիւնի մագաղանում, ստացված է մեծ ընտրություն՝ ոսկեայ, նոր ոսկեայ, նիկելայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱՎՆՈՑՆԵՐ, ՊԵՆՏԵՆԵՐ և ԼՈՐՆԵՏՆԵՐ: Թատրոնական և դաշտային ԲԻՆՈՎԵՐՆԵՐ, ԶԵՐՄԱՍՏԻՆԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և թէ վանդակների համար: Վերապատրված և վկայական ունեցող ՄԱԿՍԻՄԱՆ քերականներ: Լորնետի և պենտիի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետաղական թելեր:

Անոցներ և պենտներ արվում են նմանապէս բժշկների պատուէրով:

Մագաղանում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի նորոգելը և ապագիներին դնելը:

Գները ամենաշափաւոր են:

22—50 (5)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նազորեայա փողոց, № 9)

Յանկացողը, ունենալ իրանց առևտրական գործերի համար անցեալ յունիս ամսում ուսման ընթացքը աւարտած ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանին: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթություն, կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինակաւոր ատտեստատներ:

Ընդունելությունները սկսվելու են սեպտեմբերի 2-ից: Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Մովսիսյանների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի քննադատում: Օտարաբարձրացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю коммерческих курсовъ С. П. Мануэльянцу.

(Յուլ. 11, 25, օգ. 8, 22) 3—5

Հրատարակություն Պետերբուրգի ուսանողներին՝ հայերի ու վրացիների՝

ՀԱՅԵՐԷՆ-ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ

Կազմեց Կար. Եղուբեանց.

Բառարանը բաղկացած է լինի 18—20-ին 32° տպագրական թերթերից (576—640 երկաւնեակ երես): Բառարանի առաջարանը կը լինի հայոց լեզուի բերականություն համառոտ սկզբունքները:

Բաժանորդագրությունը Թիֆլիսի կենտրոնական գրախոսականությունում և նրա գործակալներին միջնորդությունում Թիֆլիսում մէկ լուրջի է, իսկ ճանապարհածախսի հետ 1 ր. 25 կոպէկ:

«Հայերէն-ուսերէն բառարան» լոյս կը տեսնի օգոստոսի 10-ին:

3—3

ԱՐՄԱԻՐԻ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ Միջանցի զարդի համար հարկաւոր է մի ուսուցչուհի հայոց լեզուի, լատարանութեան, վայելչագրութեան, ձեռագործի և վերականգնութեան. ընդամենը 25 դաս. ուսձիկ 505 ր.: Կը ստանայ բնակարան և վառելիքայտ: Դիմել Արմաւիր բարեկարգ և հոգաբարձութեան նախանգամ քահանայ Թուրեան. 1—3

НАРФИОМЕРИЯ
ВИКТОРИЯ РЕТИНА.
МЫЛО олео-вазелиновое
РОЯЛЬ-КОНО.
ДУХИ ВЫСШЕГО ДОСТОИНСТВА
ИКСКОРОНАКСЪ И ВЮЛЕТЪ.
О-ДЕ-КОЛОНЪ РОЯЛЬ
О-ДЕ-КОЛОНЪ ДВѢТОЧНЫЙ
РАЗНЫХЪ ЗАПАХОВЪ.
Въ Высочайше утвержденномъ Канцелярскомъ Товариществѣ торговли аптекарскими товарами въ Тифлисѣ и Баку.

ՊԱՐՖՈՐԵՐ
ՎԻԿՏՐԻԱ-ՐԵԴԻՆԱ
ՕԼԵՕ-ՎԱՅԵԼԻՆՈՎԵ
ՐՕՅԱԼ-ԿՕՆԳՕ
ԱՄՈՂԱՏՈՐՆԵՐ
ԱՄԻՆԱՐՈՐԴԵՐ
ԻԿՍՈՐՈՆԱԿՍ ԵՒ ՎԻՈԼԵՏ
ՕԴԵԿՕԼՕՆ ԵՒ ՐՕՅԱԼ
ՕԴԵԿՕԼՕՆ ԴՎԵՏՈՇՆԻ
ԶԱՄԱՅՈՒՆ
ՉԱՆԱԶԱՆ
ՎԵՐԱԶՆԱՆԵՐԻ
ՀԱՅՈՑՆԵՐԻ
ՎԵՐԱԶՆԱՆԵՐԻ
ՀԱՄԱՐԱՆԵՐԻ
ՎԱՃԱՆԱՆԻ
ՔԱՐԶԱԳՐՈՒՄ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Լ ԲԱԳՈՒՄ
9—50 (5)



Ա. ԲԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.

ՄՍՍԿՎԱՑՈՒՄ
ՊԱԼԱՏԱԿԱՆ ՀԱՅԹԱՅՈՐՈՂՆԵՐ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ
Ա. ԲԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ. ԳՈՐԾԱՐԱՆԻ
ՄԱՍՄՈՒՐԻ ՊՈՒԴՐ
ԳԼԵՑԻՆԵԱՆ ԾԱՂԱԿԱԶԻԹ ՍԱՊՈՆ
ԶՈՒԻ ՍԱՊՈՆ
ՄԱԲՐՎԱԾ ԾԱՂԱԿԱԶԻԹ ՕԳԸԿՈԼՈՆ.
Դիմում է ուսաց կայսրության բոլոր քաղաքներում: Պրեզիդենտական օգնական է ձրիապէս: 2—5 (10—25)



„ՄԻՇՈՒՆԱՑ“

ՄԿՆԵՐ ԿՈՏՈՐԵԼՈՒ ՐԻՍ ԳՈՏՄԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
զվաւոր պահաւոր գտնվում է Թիֆլիսում. և Բաղուսի Բարձրագոյն հաստատված դեղատանն ապրանքների վաճառման կովկասեան ընկերությունն մտաւ:

40—50 (5)

Լոյս են տեսել
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
հետեւեալ գրքերը.

ԼԱԼՕ, Թիւրքահայերի կեանքից (սպառված)	5 ր.
ԽՈԼԵՐԱ և նրա առաջն առնելու միջոցներ	5 "
ԱՅՆՏԵՂ ԵՒ ԱՅՍՏԵՂ, Գրեգոր Արժրուհու	10 "
ԱՐՆԱԳԻՆ, Լէօն, (սպառված)	7 "
ՊՍՏԻԿ ԵՒ ԲԱՅՑ ՉՍՏԻԿ ԵՒ Լուսկիկիչի (սպառված)	5 "
ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՏԻԿԻՆ	5 "
ՄՏԻԿ ՄՇԱԿԸ, Խ. Մալուժեանի	50 "
ԼԻՐ ԹԱԳԱՌՈՐ (ըստ Շէկսպիրի)	5 "
ԻՆՁ ԵՒ ԿԱՅՏԱԿԸ	5 "
ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ, Շէկսպիրի. Թարգ. Խ. Մ.	5 "
ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂԱՍՏ	5 "
ԳԻՒՂԱԿԱՆ ԶՈՒԹԱԿԱՆ	5 "
ԵՂԱՍՏԻ ԵՂԱՍՏԻ ԳԵՄ	7 "
ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՒ ՀՐԱՐՈՒՂ	6 "

Տպագրվում է և շուտով լոյս կը տեսնեն Կենդանական աշխարհից «Կապիկների կեանքը», Գարշինի «Արջերը» և Ժողովրդական ընթերցանութեան ուրիշ գրքեր: Դիմել Թիֆլիս. Խ. Մալուժեան